

Տիեզերքն իմ գրպանում



Երկնքի պատկերները



Գրաժինա Ստասինսկա
Փարիզի աստղադիտարան



Ֆրանսիայի Լասկո քարանձավի այս 17,000 տարվա հնուության ժայռապատկերում այժմ Բագումք կոչվող աստղակուլյտի աստղերն են:

Գերմաիայում գտնված և ենթադրաբար մոտ 4000 տարի առաջ պատրաստված սկավառակում երևում են Արեգակը, Լուսինը և մի շարք աստղեր, որոնց թվում նաև Բագումքի աստղերը:



Հայտնի «Աստղալից գիշեր Ռոնի վրա»-նկարը ստեղծվել է մեծ հոլանդացի նկարիչ Վան Գոգի կողմից:



Այն պատկերում է Մեծ Արջի համաստեղությունը:

2

Գիշերվա պարզ երկնքին նայելիս թվում է, թե աստղերը պատկերներ են կազմում:

Այս պատկերները՝ համաստեղությունները, նույնն են մնում և գիշերից գիշեր չեն փոխվում: Շարժվում է միայն ամբողջական պատկերը. ինչպես Արեգակը, այնպես էլ համաստեղությունները «ծագում են» Արևելքում և «մայր մտնում» Արևմուտքում: Ամբողջական պատկերը գիշերից գիշեր աստիճանաբար տեղաշարժվում է, բայց լինում է նույն տեղում ուղիղ մեկ տարի անց:

Չարմանալի չէ, որ դեռևս հին ժամանակներից տարբեր ազգեր մեծ ուշադրություն են դարձրել երկնքին, ինչն օգնել է նրանց կողմնորոշվել թե՛ տարածության և թե՛ ժամանակի մեջ:

Ահա այսպես ստեղծվել է Աստղագիտությունը:

3

Օրիոն՝ հայտնի համաստեղություն


Հին ժամանակներից ի վեր մարդիկ անվանումներ են տվել համաստեղություններին (հիմնականում դրանք կոչել կենդանիների կամ աստվածների անուններով) և առասպելներ հյուսել դրանց շուրջ:

Օր.՝ համաստեղությունը, որ մեզ այսօր հայտնի է Օրիոն անունով, իր անունը ստացել է հին հույների կողմից: Շատ ավանդավետաբեր կան Օրիոնի՝ գեղեցիկ կիսաստծո մասին:

Հին ժամանակներում չինացի աստղագետները Օրիոնը կոչում էին Շեն, այսինքն՝ հոյակապ որսորդ կամ ռազմիկ:

Շատ ավելի առաջ հին եգիպտացիներն այս համաստեղությունը կապում էին իրենց Օսիրիս աստծո հետ:

Իսկ համաստեղությանն առաջինն անուն տվողը շումերներն էին՝ Ուրու Ան-նա՝ «Դրախտի լույս»:



Օրիոն համաստեղության աստղերը՝ միացված երևակայական գծերով:



Վերև. Օրիոնը՝ պատկերված է 1687թ-ին լեհ աստղագետ Յան Յեվելիուսի կողմից իր երկնքի ատլասում:

Աջ. Մի հատված Դունխուանի քարտեզից՝ 7-րդ դարի չինական աստղային դիագրամ, որում պատկերված է Օրիոնի համաստեղությունը:

Օրիոնը «գլխիվայր»


Տարբեր մշակույթներ ունեն տարբեր ավանդավեպեր:

Ավստրալիայի բնիկ ցեղերից Յոլլոնու (Yollngu) մարդկանց համար Օրիոնը կանոն է (մակուլյ), որով երեք եղբայր գնում են ձկնորսության: Նրանցից մեկը արգելված ձուկ է ուտում: Բարկությունից Արև-կինը ջրային պտտահողմ է առաջացնում, որն էլ մակուլյը երեք եղբայրների հետ երկինք է բարձրացնում:

Բրազիլիայի հինդիկներն այլ բան են պատմում. «Ճեր մարդ»-ու համաստեղությունը մի մարդու մասին է, ում կինը հրապուրված էր նրա եղբորով: Այդ կինը սպանում է իր ամուսնուն և կտրում նրա ոտքը: Աստվածները տղամարդուն խղճալով՝ վերափոխում են նրան համաստեղության:

Օրիոնի համաստեղությունը հարավային կիսագնդից դիտելիս, երբ այն գլխիվայր է երևում:

Վրան պատկերված է ավստրալացիներին բնութագրող ավանդավեպը՝ կապված այս համաստեղության հետ:




«Ճեր մարդը» հենց բրազիլական ծագման անվանում է մի համաստեղության համար, որը կազմված է Օրիոնից և Ցլից:

(Նկարը Ամազոնիայի թանգարանից)



Երկինքը տարբեր եղանակներին



Աստղերը տեսանելի են միայն գիշերը. օրվա ընթացքում դրանք ծածկվում են Արեգակի լույսով:


Մեկ տարվա ընթացքում, Երկիրը պտույտ է կատարում Արեգակի շուրջն այնպես, որ տարբեր եղանակներին երևում են երկնքի տարբեր հատվածներ (տես պատկերը մյուս էջում):

Երկնուլորտը երևակայական մթնուլորտ է՝ կենտրոնացած Երկրի շուրջ: Այն արտապատկերում է բոլոր աստղերը, որոնք թվում է, թե շարժվում են:

Երկնուլորտում Արեգակի տեսանելի ուղին իրենից շրջան է ներկայացնում, որը հատում է այն համաստեղությունները, որոնք մոտ են գտնվում Արեգակի շուրջ Երկրի պտտման հարթությանը: Այս ուղին կոչվում է գոդիակ (կենդանակերպ):

Երկրի ուղեծիրն Արեգակի շուրջ: Ողջ տարվա ընթացքում գիշերային երկնքում տեսանելի են տարբեր համաստեղություններ:

Երկրի հակադիր կիսագնդերում կանգնած մարդիկ միմյանց համար գլխիվայր են, և տեսնում են նույն համաստեղության հակադարձ պատկերները:





Շ-րդ դարի խճանկար, որը հունական մոտիվներով պատկերում է կենդանակերպի նշանների անիվը:



Չինական կենդանակերպը գուլշակությունների համար էր, և շատ տարբերվում է արևմտյան կենդանակերպից:

Աստղագիտություն և աստղագուլշակություն

Կենդանակերպ (զոդիակ) բառը հայտնի է հորոսկոպի հետ ունեցած կապի պատճառով, որն իբրև թե կանխագուլշակում է ապագան՝ ելնելով տվյալ մարդու ծննդյան օրը հորոսկոպում Արեգակի ունեցած դիրքից: Հորոսկոպ կազմող մարդիկ աստղագուլշակներ են, որոնց պետք չէ խառնել աստղագետների հետ:

Աստղագիտությունը գիտություն է, որը նկարագրում և փորձում է հասկանալ երկրի մթնոլորտից դուրս գտնվող երկնային մարմնները (մոլորակներ, աստղեր, գալակտիկաներ):

Աստղագուլշակությունը գիտություն չէ: Այն ենթադրում է, որ կա կապ Արեգակի և մոլորակների դիրքի ու մարդկային կյանքի միջև: Սակայն այդպես կարծելու հիմք չկա: Ընդհակառակը՝ շատ են դա հերքող փաստերը:

Համաստեղություններն ու աստղագիտությունը

Համաստեղություններ հաճախ կարելի է տեսնել պետական դրոշների վրա, ինչը ցույց է տալիս երկնքի կարևորությունը մարդկության համար նույնիսկ մեր ժամակներում:



1927թ-ին Այասկայի դրոշի համար մրցույթ էր հայտարարվել: Հաղթող ճանաչվեց Բենի Բենսոնը՝ 13-ամյա մի տղա Այասկայից: Նա գրել էր,- «Հյուսիսային աստղը Այասկայի ապագա նահանգն է, որը Միության ամենահյուսիսում է: Շերեփը Մեծ Արջն է, որը խորհրդանշում է ուժ:

Բրազիլիայի դրոշը. Դրոշի 27 աստղերը խորհրդանշում են 27 նահանգները և ունեն ճիշտ նույն դասավորությունը, ինչ Բրազիլիայի գիշերային երկնքում:



12


Անգեն աչքով կարելի է տեսնել հազարավոր աստղեր: Տարիների ընթացքում դրանք գրանցվել են շատ երկնային ատլասներում՝ համաստեղությունները պատկերելով գեղեցիկ նկարների միջոցով:

Այժմ աստղագետները կարողանում են չափել աստղերի միջև եղած հեռավորությունները: Մեկ համաստեղության մեջ աստղերը սովորաբար շատ հեռու են իրարից և ֆիզիկապես կապված չեն: Սակայն մենք դեռ սիրում ենք տարբերակել համաստեղությունները երկնքում:


Աստղադիտակների միջոցով կարելի է գտնել շատ ավելի շատ աստղեր: 2014թ-ին Կանարյան կղզիներում Իսահակ Նյուտոնի անունը կրող աստղադիտակով աստղագետները գտան և ապա թողարկեցին նոր շտեմարան 219 մլն աստղով:

13


Մի շարք հայտնի համաստեղություններ



Երկվորյակներ



Առյուծ



Կարիճ



Կարապ

Երկվորյակները՝ 1537թ-ին Արարման հրաշքները պարսկերեն կրկնօրինակում գրված ալ-Քազվինիի կողմից 1250թ-ին:



Կարիճը՝ Անդալու դի Նեգրոյի Ուլորտների պայմանագրում (1330թ):



Առյուծը՝ գերմանացի աստղագետ Յոհան Բայերի «Ուրանոմետրիա»-ում (1603թ):



Կարապը՝ անգլիացի աստղագետ Ջոն Ֆալմսթրիի Երկնային ատլասում (1729թ.):

Տիեզերքն իմ գրպանում N5

Այս գրքուկը գրվել է 2015թ-ին Գրաժինա Ստասինսկայի կողմից (Փարիզի աստղադիտարան, Ֆրանսիա) և վերանայվել է Սթեն Կուրցի կողմից (ՈՒՆԱՄ/UNAM Մորելիայի ռադիոաստղագիտության ինստիտուտից, Մեքսիկա):

Շապիկին պատկերված է «Էմուն երկնքում»՝ համաստեղությունը, որը հայտնի է ավստրալական շատ աբորիգենյան մշակույթներում: Այն որոշվում է ոչ թե աստղերով, այլ ճիր Կաթինի ֆոնի վրա երևացող մուգ բծերով:



Այս շարքի և գրքուկում ներկայացված թեմաների մասին ավելին իմանալու համար այցելիր՝ [//www.tuimp.org](http://www.tuimp.org)

Թարգմանիչ՝ Սելիսե Ասրյան,
Բյուրականի աստղադիտարան
TUIMP Creative Commons

